ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

N 44/9-29.21

07. 10. 2021թ.

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ
տնօրեն Ա. Երիջանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Երիջանյան,

ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ.-ին կնքվել է N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետ համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները՝ էականորեն խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 և 2.1.7 կետերը՝ ՀՀ դատախազությունը, որպես գնորդ, իրավունք ունի ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի: Ինչպես նաև միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-21/2-7 ծածկագրով պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման Պատվիրատուի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Հ. Նավասարդյան